2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## <u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2019/85, 05.11.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Վերիտաս» ՍՊԸ

**Պատվիրատու՝** «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ

**Գնման ընթացակարգերի ծածկագրերը և առարկաները՝**

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» - գինեկոլոգիական էնդոսկոպիկ հավաքածուի ձեռքբերում

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» - բժշկական մահճակալների ձեռքբերում

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» - բժշկական թափոնների ոչնչացման ծառայությունների ձեռքբերում

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» - հումացանցային ծառայությունների ձեռքբերում

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» - բժշկական նշանակության ապրանքի ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝** Արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել ընթացակարգերը՝

1. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36
2. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37
3. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38
4. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39
5. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան Մելիք Ադամյան 1
«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյանից
Հասցե՝ Նորագավիթ 9փ, 3ա., հեռ. 099546900
e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գյուրջյան 10

Գնանշման հարցման ընթացակարգերի ծածկագրեր
ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37,
ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39,
ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40

# ԲՈՂՈՔ

**1. Վեճի առարկան**

1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ կողմից հայտարարվել են ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40 ընթացակարգերը: Գնման առարկաները ըստ ծածկագրերի հետևյալն են՝

**ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36** - գինեկոլոգիական էնդոսկոպիկ համալիրի ձեռքբերում

**ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37** - բժշկական մահճակալների ձեռքբերում

**ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38** - բժշկական թափոնների ոչնչացման ծառայությունների ձեռքբերում

**ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39** - համացանցային ծառայությունների ձեռքբերում

**ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40** - բժշկական նշանակության ապրանքի ձեռքբերում

**1.2 Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուի կողմից չի հրապարակվել գնումների պլանը:**

**2. Բողոքի իրավական հիմքերը:**

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետերի՝

**<<16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:**

**17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է>>:**

**Բողոքի պահանջը՝**

Արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել հետևյալ ընթացակարգերը

1. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36
2. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37
3. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38
4. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39
5. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40

Կից ներկայացվում է բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյան

05.11.2019թ.